



ԱՏՐՊԷՅՃԱՆ ՀԱՄԱԶԱՅՆ ՁԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՆՈՐ ԾՐԱԳՐԻՆ

Փարիսի մէջ աւարտած է Երէկ Մինսկի խումբի հերթա-
կան հանդիպումը: Նախապէս քննարկելով ժամանակացոյցի
նոր տարրերակը՝ այն ի վերջոյ անդրադարձած է նախազա-
հոյ Մարիօ Սիկայի՝ հակամարտութեան կարգաւորման նոր
ծրագրին: Հաստատի աղբիւրներէ յայտնի դարձած է, որ մաս-
նակցող 10 պետութիւնները, ինչպէս նաեւ Հայաստանն ու
Աւստրիան Ղարաբաղը հաւանութիւն տուած են այդ ծրա-
գրին, սակայն Ատրպէյճանը կտրականապէս դէմ արտայայ-
տուած է ներկայացուած ծրագրին: Ատրպէյճանի այս քայլը
խիստ անհանգստութիւն յառաջացուցած է Մինսկի խումբի
անդամ պետութիւններուն մօտ, որոնք խիստ բացասական
գնահատական տուած են այդ կեցուածքին: Իրենք դժգո-
հութիւն արտայայտած են մասնաւորապէս Ռուսաստանի և
Մ. Նահանգներու հանդէպ: Մարիօ Սիկա առաջարկելով
ծրագրի մանրամասնութիւնները դիտել տուած է թէ նոյեմ-
բեր 2ին հրաւիրուած է Մինսկի խորհրդաժողով, մինչ այդ սա-
կայն հայկական ուժերը պէտք է դուրս գան գրաւուած տա-
րածքաշրջաններէն, բացառութեամբ Քելրաջարէն ու Ճեպ-
րայիլէն: Այս շրջանները պէտք է ազատուին խորհրդաժողովի
աւարտէն յետոյ, որ իր հերթին քննարկելու ու վերջնական
կորակացութիւն տալու է Ղարաբաղի կարգավիճակի մասին:
Փաստօրէն առաջին անգամ Մինսկի խումբի շրջանակներուն
մէջ անուղղակիօրէն ընդունուած է այն գրութիւնը, որ Ղա-
րաբաղի պաշտպանական բանակը ստիպուած է գրաւել մեր-
ձակայ ատրոպէյճանական տարածքները՝ ապահովելու համար
իր անվտանգութիւնը: Այս մօտեցումն է, թերևս որ դրդած է
Ատրպէյճանին նոյնպէս առաջին անգամ դէմ դուրս գալու
Մինսկի խումբի շրջանակներէն առաջարկուող ծրագրէն: Ա-
ւելցնենք, որ Ատրպէյճանի առաջարկուած է վերջնական պա-
տասխան տալ նոր ծրագրի մը համար մինչև հոկտեմբեր 7ը:
Մինսկի խումբի հանդիպումը կը ծրա-
գրուի տեղի ունենալ Հոտմի մէջ, հոկտեմբեր ամսու 18ին:



ԵԱՀՅԻ Մինսկի խումբը անցնող երկու շաբաթներու
ընթացքին, Փարիսի մէջ անպաշտօն խորհրդակցութիւններ
վարեց Աւստրիան Ղարաբաղի հակամարտութեան կարգա-
ւորման շուրջ: Նպատակը հակամարտութեան կողմերու
առաջարկներու և առարկութիւններու քննարկումն էր:
Պէտք է ըսել, թէ այս բանակցութիւնները սկսան կողմերու
միջև բացարձակ համաձայնութիւն գոյացնելու ստաճաղ-
րանքով, իսկ անհամաձայնութեան պարագային՝ ճշդորո-
շուած էր երկարաձգել բանակցութիւնները մինչև որ հակա-
մարտ կողմերը յանգին փոխադարձօրէն ընդունելի ծրագրի
մը շուրջ: Երէկուան անհամաձայնութենէն վերջ, փաստօրէն
երկրորդ փոխ ընտրանքն է որ գործադրութեան կը դրուի,
երկարաձգելով բանակցութիւններու ընթացքը:

Հայաստանի կառավարութիւնը բանակցութիւններէն
առաջ յայտարարած էր, թէ Ղարաբաղեան այս խնդրին կա-
պակցարար իր դիրքորոշումը զուտ սկզբունքային պիտի ըլլայ
և խնդրի կարգաւորման ուղղութեամբ Հայաստան պիտի
չարունակէ պնդել որ Ղարաբաղեան հարցը բացի քաղաքա-
կան կարգաւորումէ, այլ ընտրանք չունի, թէ ինք համաձայն
պիտի գտնուի Ղարաբաղի կողմէ առաջադրուած որեւէ լու-
ծումի: Միաժամանակ, Հայաստանը արտայայտած է այն տե-
տակէտը թէ ինչ միջնորդութիւններ ալ ընթանան Ղարաբաղ-
Ատրպէյճան շփումներու գծով, անոնք իրենց տրամաբանա-
կան աւարտը պէտք է գտնեն ԵԱՀՅԻ Մինսկի խումբի խոր-
հրդաժողովի հրաւիրումով: Այսինքն, նորէն դէպի ՄԱԿի
822 և 883 բանաձևերը պիտի ուղղուին, որոնք այնքան ալ
չկին նպաստեր առճակատման արդարացի լուծման: Այդ բա-
նաձևերուն ԱՂՀն իբրև հակամարտութեան կողմ չէր դիտ-
ուեր, մինչդեռ նոր տուեալներով ԱՂՀ ճանաչումը աւելի նկա-
տելի կը դատնայ այլևս: